# ՓԱՅՏԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՊԱՐՍՊԱՏՈՒՆԻՔԸ Մ. Թ. I ԴԱՐԻ ԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Ս. Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

*«Աշխարհացույց»-ում հիշատակվող Փայտակարանը և Պարսպատունիքը, ինչպես երևում է Ստրաբոնի հաղորդած տեղեկություններից, Ատրպատականի մարերից նվաճվել և հայկական պետության մեջ ընդգրկվել էին մ. թ. ա. II դարի սկզբներին Արտաշես Ա-ի (189—160) օրոք։ Սրանցից առաջինը՝ Փայտակարանը (Ստրաբոնին հայտնի Կասպիանա անվամբ՝ հայկական աղբյուրների Կասպքը կամ Կասպից երկիրը), տարածվում էր Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանից մինչև Ատրպատական և Կասպից ծով՝ ներառելով նաև այժմյան Թալիշի տարածքը։ Երկրորդը՝ Պարսպատունիքը (Ստրաբոնի Բասորոպեդան), տարածվում էր Արաքսի և Ատրպատականի միջև՝ արևելքում սահմանակցելով Կասպք-Փայտակարանի, իսկ արևմուտքում՝ «Աշխարհացույցի» Մարանդ ու Գաբիթյան գավառների հետ։ Այն ընդգրկում էր ներկայիս Իրանական Ադրբեջանի հյուսիսում գտնվող Ղարադաղ կամ Սիահ-քուհ լեռնային շրջանը[2]։*

*Կասպից ծովից արևմուտք ընկած այս շրջանները կարևոր ստրատեգիական նշանակություն ունեին։ Այստեղից էին Ատրպատական և Հայաստան ներխուժում Դերբենդի և հարևան լեռնանցքներով եկող «հյուսիսականները» Հյուսիսային Կովկասի սարմատական և նախո-դաղստանյան ցեղերը, ինչպես նաև հյուսիս-արևելյան Անդրկովկասում բնակվող սրանց ցեղակիցներն ու դաշնակիցները՝ սարմատալեղու մագքութների գլխավորությամբ։ Կտրելանցնելով Կուրը նրա ստորին հոսանքի շրջանում, «հյուսիսականները» դուրս էին գալիս Փայտակարան, ապա և Պարսպատունիք, որոնց վրայով թափանցում էին մի կողմից Ատրպատական, մյուս կողմից՝ Հայաստանի միջնաշխարհ։ Առաջին դեպքում նրանք հիմնականում օգտվում էին Կասպից և Հայոց լեռնանցքներից, որոնցից մեկը գտնվում էր Ատրպատականի և Կասպք-Փայտակարանի միջև (այժմյան Սալավաթի լեռնանցքը Իրանական Ադրբեջանի հյուսիս-արևելքում), իսկ մյուսը ընկած էր նախորդից արևմուտք, Ատրպատականի և Պարսպատունիքի միջև (այժմյան Ղարադաղի լեռներում)[3]։ Երկրորդ դեպքում՝ Կասպքի և Պարսպատունիքի վրայով Հայաստանի միջնաշխարհը ներխուժելիս, նրանք օգտվում էին այն ճանապարհներից, որոնք ընթանում էին Արաքսի հոսանքն ի վեր դեպի երկրի խորքերը (հիշենք, օրինակ, IV դարի 30-ական թթ. Սանեսանի գլխավորությամբ տեղի ունեցած մագքութա-հյուսիսական հրոսակախմբերի ներխուժումը Հայաստանի Միջնաշխարհ)։*

---

[1] Strabo. XI, 14. 5.

[2] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 77, 88։

[3] Նույն տեղում, էջ 50, 58։

Խնդրո առարկա նահանգների I գլխի երրորդ քառորդի պատմության վերաբերյալ որոշ տվյալներ են պարունակում Տակիտոսի, Հովսեպոս Փլավիոսի և Մովսես Խորենացու երկերը։ Դրանք, կցկտուր և թերի լինելով հանդերձ, որոշակի արժեք են ներկայացնում, քանի որ հնարավորություն են տալիս համադրման և այդ համադրումից բխող եզրակացությունների միջոցով վերականգնելու այս շրջանների նշված ժամանակաշրջանի պատմության մի քանի գրվագներ։

Մ. թ. 58 թ. Կոմմագենեի, Փոքր Հայքի և Ծոփքի թագավորների հետ միասին հռոմեական ու դաշնակից բանակներով Կորբուլոնը ներխուժեց Մեծ Հայք՝ հայ ավագանու համաձայնությամբ նրա գահին տիրած Տրդատ Արշակունուն վտարելու և այն վերստին Հռոմի գերիշխանությանը ենթարկելու նպատակով։ Միաժամանակ, հյուսիսից Մեծ Հայք թափանցեցին հենիոխների ու մաբելոնների թագավորի զորքերը, ինչպես նաև Վիրքի թագավոր Փարսման I-ի գլխավորած մոսխերի և իբերների ջոկատները[4]։

Ներխուժած հռոմեական և դաշնակից զորքերի ճնշման տակ Տրդատ I-ը հեռանում է արևելք։ Կորբուլոնը կարծում էր, թե նա քաշվել է Արտաշատ, «սակայն հետախույզներից տեղեկանալով, որ թագավորը դուրս է եկել հեռավոր արշավանքի դեպի մարերի երկիրը կամ դեպի աղվանները, հռոմեական զորավարը, սպասելով լուսաբացին, հղում է թեթևազենների ջոկատները, որպեսզի սրանք բոլոր կողմերից պաշարեն բերդապարիսպները և ձեռնամարտի չմտնելով, սկսեն ոչնչական գործողությունները թշնամու դեմ»[5]։ Դեպքերին իրազեկ Տակիտոսի այս վկայությունից պարզվում է, որ Տրդատի արշավանքը ուղղված է եղել Ատրպատականի և բուն Աղվանքի միջև տարածված շրջանների ցեղերի դեմ։ Ըստ երևույթին, նա մտադրվել էր ամրանալ այստեղ, որովհետև հռոմեացիների համար դժվարահաս այս հողերը հարավում սահմանակցում էին Ատրպատականի հետ, որի վրայով Տրդատը օգնություն էր սպասում իր եղբայրներից՝ Իրանի գահակալ, արքայից-արքա Վաղարշ I-ից և Ատրպատականի թագավոր Բակուրից։

Սակայն Տրդատը ստիպված է եղել ետպաստանելու Ատրպատականում. Ըստ երևույթին, նա այդ քայլին դիմել էր տեղաբնիկ ցեղերի ու նրանց «հյուսիսական» դաշնակիցների և ոչ թե հռոմեացիների ճնշման տակ։ Հռոմեացիները այդ նույն ժամանակ զբաղված էին Արտաշատի և շրջակայքի նվաճմամբ, որտեղ և նրանք անց են կացրել 58—59 թթ. ձմեռը[6]։ Հաջորդ տարի՝ 60 թ., Տրդատը մի նոր փորձ արեց վերանվաճելու այս շրջանները, բայց դարձյալ ապարդյուն։ «Երբ Տրդատը, անցնելով մարերի հողերով, ներխուժեց նրանց հետ սահմանակցող Հայաստանի շրջանները, Կորբուլոնը ստիպեց հեռանալ նրան, օժանդակ զորքերի հետ միասին նրա դեմ ուղարկելով լեգատ Վերուլանոսին և լեգեոնների հետ միասին շտապելով նրա հետևից»[7]։

Հայտնի է, որ Տրդատի արտաքսումը և նրա փոխարեն հռոմեական դրածո Տիգրան VI-ի գահակալումը Մեծ Հայքում, ինչպես պարթևական կողմնորոշում ունեցող հայ ավագանու, այնպես էլ պարթևական վերնախավի մեջ

---

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա., Երևան, 1971, էջ 737։

[5] Tacitus, Annales, XIII, 41.

[6] Հ. Ս ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1944, էջ 336։

[7] Tacitus, XIV, 23.

ընդհանուր դժգոհություն առաջացրին Վաղարշ I-ի վարած քաղաքականությունից։ Ինքը՝ Տրդատը, հանդիմանում էր ավագ եղբորը, թե «անգործությամբ չէ, որ պահվում են մեծ պետությունները, այլ մարդկանց և զենքերի մրցակցությամբ»[8]։ Ի վերջո, Վաղարշը որոշում է հաշտվել ապստամբ Վրկանի՝ Իրանի հյուսիս-արևելյան ծայրամասի հետ։ Ճանաչելով նրա անջատումը և այնտեղից օժանդակ ուժեր ստանալով, նա վերսկսում է պատերազմը Հռոմի դեմ։ Ռազմական գործողությունները զարգանում են հօգուտ պարթևների։ 61 թ. Կորբուլոնի հետ կնքած զինադադարի, ապա՝ հռոմեական նոր զորավար Պետոսի խայտառակ փախուստից հետո կնքված Հռանդեայի դաշնագրի (63 թ.) համաձայն պարթևա-հայկական կողմը հասնում է Տրդատի ճանաչմանը որպես Մեծ Հայքի օրինական թագավորի։

Հայտնի է, որ Վաղարշն այս անգամ պատերազմը վարում էր առանց իր եղբայրների՝ Տրդատի և Բակուրի մասնակցության, որոնց դալստյանն էր, ըստ Տակիտոսի, սպասում նա[9]։ Մեծ Հայքից Տրդատի բացակայության հանգամանքը ի նկատի ունենալով էր, որ Պետոսը Ասորիքից իր զորքերով ժամանած Կորբուլոնին առաջարկում էր «համատեղ ներխուժել Հայաստանի սահմանները, որը թուլացել էր Վաղարշի հեռանալով»[10]։ Տրդատի բացակայության փաստն արձանագրված է նաև Հռանդեայի հաշտության մեջ՝ համաձայն որի մի կողմից «ոչնչացվեցին Եփրատի այն կողմում Կորբուլոնի ձեռնարկած բոլոր կառուցումները», իսկ մյուս կողմից՝ «հայերը թողնվեցին առանց տիրակալի»[11]։

Որտե՞ղ կարող էր լինել Տրդատը։ Քանի որ ապստամբ Վրկանի հետ արդեն հաշտություն էր կնքված, ապա, ամենայն հավանականությամբ, Տրդատը և Բակուրը հայ-մարական սահմանամերձ շրջաններում և հյուսիսից նրանց հարող Արևելյան Անդրկովկասի հողերում էին։ Ի տարբերություն 59—60 թթ., այս անգամ՝ 61—63 թթ. ռազմական գործողությունները ինչպես արևմուտքում Հռոմի դեմ, այնպես էլ արևելքում, ապստամբ ցեղերի և նրանց հարած «հյուսիսականների» դեմ զարգանում են հօգուտ Արշակունիների։ Արդյունքը լինում է Կասպքի և հարակից շրջանների վերանվաճումը և «վրկանական» ցեղերի (դրանք հիմնականում ունեին արևելաիրանական-սկյութական ծագում) հաստատումն այստեղ տեղական և եկվոր «հյուսիսական» բնակչության միջավայրում։ Վերջիններս միայն զենքի միջոցով էին ենթարկվել Արշակունիների գերիշխանությանը և, բնականաբար, «հյուսիսականների» դեմ մղվելիք ապագա գոտեմարտում Արշակունիները նրանց լոյալության վրա հույս դնել չէին կարող։

Արևելաիրանական-սկյութական ցեղերի մի մասը Արշակունիների արքայական ապառն (կամ պառն) ցեղի գլխավորությամբ Անդրկասպյան երկրամասից Վրկան և Կոմիսենե էր ներխուժել դեռևս մ. թ. ա. 230-ական թթ.[12], իսկ մյուսները՝ ավելի ուշ։ Միջինասիացի այս ցեղերի ներխուժումները երբեմն այնպիսի մեծ մասշտաբներ էին ընդունում, որ դրանց

8 Նույն տեղում, XV, 1։
9 Նույն տեղում, XV, 14։
10 Նույն տեղում, XV, 17։
11 Նույն տեղում։
12 М. М. Дьяконов. Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 181։

դիմագրվելը վեր էր լինում անգամ պարթև գահակալների ուժերից (նրանցից Հրահատ II-ը՝ 138—128, և Արտավան I-ը՝ 128—124, ընկան այդ պայքարում)։ Ներխուժումների ընթացքում Իրանի հյուսիս-արևելյան մասում հաստատված արևելաիրանական-սկյութական այս ցեղերի շնորհիվ էր, գլխավորապես, որ հյուսիսային Պարթևստանում, Մարգիանայում և հարակից շրջաններում մ. թ. I դարի կեսերին ստեղծվեց Սանաբարի արևելապարթևական իշխանությունը[13], իսկ փոքրիկ Վրկանի բնակիչները արևմուտքում հայտնի դարձան որպես «հյուրկանների հզոր ժողովուրդ» (Hyrcanorum. gentis validae)[14]։

Հյուսիս-արևելյան Իրանի այս ցեղերից Արշակունիների բանակում գնդեր կային դեռևս Վաղարշ I-ի նախորդների, հատկապես Արտավան III-ի (12—38) և նրա հաջորդներ՝ «վրկանցիներ» Վարդանի ու Գոդերձի (Գոթարզ՝ 38—51) ժամանակ[15]։ Սակայն պարթևական բանակում սրանց թիվն առանձնապես մեծացավ, երբ, Տակիտոսի վկայությամբ, Վաղարշը 61 թ. «դադարեցնելով երկպառակությունը հյուրկանների հետ, կենտրոնացնում է իր հիմնական ուժերը և արշավանքի ելնում այդ հրոսակախմբերի հետ՝ սպառնալով հռոմեական պրովինցիաներին»[16]։

Ստրատեգիական կարևոր դիրքեր գրավող շրջաններում ռազմիկ ցեղերի վերաբնակեցումը, ինչպես նաև այդ շրջանների պաշտպանության վստահումը նրանց, մի քաղաքականություն է, որը կիրառվել է բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում և ո՛չ միայն Իրանում։ Այն շատ վաղ որդեգրել էին նաև Արշակունիները։ Հիշենք, թեկուզև, Հրահատ I-ի (176—171) կողմից մարդերի ցեղի վերաբնակեցումը Քարաքսի շրջանում՝ Ռագայի (արդի Ռեյի) մոտ գտնվող «Կասպիական դռներ» կոչված լեռնանցքի պաշտպանությունը ապահովելու նպատակով[17]։

Վերոհիշյալ շրջաններում «վրկանական» ցեղեր վերաբնակեցնելով, Արշակունիները հետապնդում էին երկու նպատակ։ Նախ, նրանք հույս ունեին, թե կիսաքոչվորական կյանք վարող այս ցեղերը Հայաստանի արևելյան և Ատրպատականի հյուսիսային շրջանները պատվար կդարձնեին Արևելյան Անդրկովկասի վրայով այս երկրները թափանցող «հյուսիսականների» դեմ. Ապա՝ որպես զենք կրող և միևնույն ժամանակ կենտրոնախույս ձգտումներ հանդես բերող անհուսալի տարրերի, սրանց երկրի կենտրոնական շրջաններում պահելը վտանգավոր էր կենտրոնական իշխանության ապահովության տեսակետից։

Այս վերաբնակեցումից դեռ մեկ տասնամյակ չանցած՝ 72 թ. ալանների գլխավորությամբ տեղի ունեցած «հյուսիսականների» ներխուժումը ցնցեց Հայաստանն ու Ատրպատականը՝ հատկապես աղետաբեր լինելով վերջինի համար։ Հովսեպոս Փլավիոսի արշավանքի հետևյալ նկարագրությունն է

---

13 В. М. Массон, Восточнопарфянский правитель Санабар, «Труды ГИМ», вып. 26. Нумизматический сборник, ч. 2, М., 1957, էջ 34—42։

14 Tacitus, XV, 1.

15 Նույն տեղում, XI, 8, 9 և VI, 36, 44

16 Նույն տեղում, XV, 2։

17 Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Խարակացու «Պարթևական կայանները», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 174 և 180, ծան. 52։

անում («Հուդայական պատերազմը», VII, 7, 4). «Սակայն նրանք (ալաններ-ը— Ս. Պ.), մտադիր լինելով այդ ժամանակ ներխուժելու ավարառության նպատակով Մեդիա և ավելի հեռավոր տեղեր՝ խոսքը մեկ արին հյուրկանների թագավորի հետ։ Սա էր տերը անցքի, որը Աղեքսանդր թագավորը փակել էր երկաթե դռներով։ Արդ՝ երբ վերջինս նրանց տրամադրության տակ դրեց անցքը, նրանք միահամուռ հարձակվեցին մեդացիների վրա, ավարի առան բազմամարդ երկիրը, որ լի էր ամեն տեսակ անասուններով. և ոչ ոք չհամարձակվեց նրանց դիմադրել, որովհետև այս երկրի բնակիչը թագավորը սարսափած փախել էր դժվարամատույց տեղեր, թողնելով բոլոր մյուսներին բախտի քմահաճույքին։ Հազիվհազ նա կարողացավ ազատել նրանց ձեռից կնոջը և հարճերին, որ կերի էին բռնված՝ վճարելով հարյուր տաղանդ։ Ալանները մեծ հեշտությամբ ու առանց կռվի կողոպուտի մատնեցին երկիրը մինչև Հայաստան և հեռացան՝ վերցնելով իրենց հետ ամբողջ ավարը։ Հայաստանում թագավորում էր Տրդատը, որը ոազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց և քիչ էր մնում, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը կերի ընկներ կենդանի։ Ալաններից մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն բռնելու էր, սակայն Տրդատն իսկույն իր սրով պարանը կտրեց և շտապ փախավ»[18]։

Տրդատ I-ի և «հյուսիսականների» ընդհարման նույն դեպքի մի ուրիշ նկարագրություն է բերում Մովսես Խորենացին՝ վերագրելով այն Խոսրովի որդի Տրդատին, այսինքն՝ պատմական Տրդատ III-ին (298—330)։ Սակայն վաղուց է հայտնի, որ Խորենացու Տրդատի մեջ պահպանված են ոչ միայն վերջինիս, այլև Տրդատ I-ի գծերը՝ հատկապես ակնառու ներքոհիշյալ հատվածում[19]. «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանաւք իջեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. եւ ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով։ Ոչ կարեմ ասել զերագոյնն ձեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խաղային, օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թաւթափեալ ցանցոյն կայտռէին յերեսս երկրին։ Զոր տեսեալ թագաւորին Բասլաց (հյուսիսականների—Ս. Պ.)՝ մատ հասանէ յարքայն եւ հանեալ յասպազինէն զներդեայ քեմխտապատ պարանն, եւ կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն եւ յանուիթ աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. եւ ինքն վառեալ վերտ պահպանակաւք, ուր ոչ գծէին նետք։ Եւ քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհսկայն զլանջաւք առ երիվարին. եւ ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկայիին, եւ սաստկութեամբ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիպեցուցանէր զերկուայրին, եւ ընդ մէջ կտրէր զայրն եւ զոյգ ընդ պարանոցին զկլուխ երիվարին։ Իսկ զաւրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց եւ զզաւրաւորն մի-

---

18 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 9—10։

19 Նույն տեղում, հատ. Ա, Երևան, 1944, էջ 354—355։ Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 214։ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, էջ 433. М. И. Артамонов, Очерки древнейшей истории хазар. Л., 1936, էջ 121։

ջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային. զորոց զհետ մտեալ Տրդատ, վարէ մինչեւ յաշխարհն Հոնաց»[20]։

Գարգարացվոց դաշտը, որտեղ Տրդատը ընդհարվել էր «հյուսիսականների» հետ, գտնվում է Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանում՝ համապատասխանելով այժմյան Միլի դաշտին[21]։ Ինչպես պարզվում է Փլավիոսի և Խորենացու հաղորդումների համադրումից, ալանները և՛ Ատրպատական ներխուժելիս, և՛ այնտեղից վերադառնալիս անցել էին Կասպք-Փայտակարանի վրայով։ Նշանակում է, այս շրջաններում «հյուսիսականները» ոչ միայն դիմադրության չէին հանդիպել, այլև ունեցել էին իրենց աջակիցները, որոնց օգնության շնորհիվ նրանք հեշտությամբ թափանցել էին Ատրպատական և ավարի մատնել այն։

Նման հանգամանքներում «հյուրկանների (վրկանների) թագավորի» հարցին կարելի է տալ նոր լուսաբանում։ Քանի որ, ըստ Փլավիոսի, ալանները, ստանալով «հյուրկանների թագավորի» աջակցությունը, անմիջապես ներխուժել էին Ատրպատական-Մարաստան, ուստի սա չէր կարող լինել ո՛չ Վրկանի, ո՛չ էլ Վիրքի թագավորը, ինչպես նախկինում կարծում էին[22]։ Սա կարող էր լինել միայն Կասպքում հաստատված վրկանցի վերաբնակիչների ցեղապետը, որը հնարավոր է, եղել է նաև այս շրջանի փոխարքան։ Այս ենթադրությունը հավանական է նախ նրանով, որ այս կողմերում միայն վրկանցի վերաբնակիչների ցեղապետը կարող էր արևմուտքում հայտնի դառնալ «հյուրկանների թագավոր» անվամբ, ապա՝ նրանով, որ Կասպքի կառավարիչի գիտությամբ ու աջակցությամբ միայն «հյուսիսականները» կարող էին անապասելի կերպով ներխուժել Ատրպատական և հանկարծակիի բերել նրա Իակուր թագավորին։ Ըստ այսմ, «հյուրկանների թագավորի» տիրապետության տակ գտնված լեռնանցքը, որն «Աղեքսանդր թագավորը փակել էր երկաթե դռներով» և որով ալանները ներխուժել էին Ատրպատական, լինելու էր Կեղծ Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրի» երկում «մերձ յաշխարհն Թաւիշ ի գաւառն Գիլանայ» հիշատակված, մեկ հայտնի Կասպիական լեռնանցքը՝ Կասպքի հարավում, նրա և Ատրպատականի միջև[23]։

Անդրկովկասից «հյուսիսականների» հեռանալուն հաջորդած իրադարձությունների նկարագրությունն է պարունակվում Խորենացու հետևյալ հաղորդումը Կասպից երկրի և Ատրպատականի հարակից շրջանների վերանվաճման մասին։

«Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս՝ զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին։ Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուին Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեռն, Եւ ծովեղերեայք, եւ այսր եւս քան զնոսա. նա եւ Կասբից երկիրն յայն սակս ապստամբէ ի մերոյ արքայէն։ Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՄամբատ ամենայն գաւրաւքն Հայոց, ինքն արքայ յուզարկ երթալով աւուրս եւութն։ Իսկ Մամբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կաս-

20 Խորենացի, Բ, ձեւ։

21 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 46։

22 Հ. Մանանդյան, Նշվ. աշխ., հատ. Բ, մասն Ա, էջ 10։

23 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 58։

րից աւերեալ՝ առաւել քան զԱրտաշեան զերի ածէ ի Հայս. ընդ որս եւ զՁարդմանոս անուն Թագաւոր նոցին»[24]:

Հայտնի է, որ բերված հատվածում հիշատակված հայոց արքան՝ Խորենացու Արտաշես II-ը, իր մեջ պահել է թե՛ պատմական Արտաշես I-ի և թե՛ Տրդատ I-ի գծերը[25]: Գ. Տիրացյանի կարծիքով, Արտաշես II-ի զորավար Սմբատ Բագրատունու կողմից Կասպից երկրի վերանվաճման և նրա բնակիչների գերեվարման մասին այս հաղորդումը վերաբերում է պատմական Արտաշես I-ին և զուգահեռ է նրա այս կողմերում կատարած նվաճումների մասին Ստրաբոնի վերոհիշյալ հաղորդման (XI, 14, 5)[26]: Մեր կարծիքով, Մովսես Խորենացին իր գրավոր աղբյուրից (դա համարվում է Ողյումպ քրմի «Մեհենական պատմությունը»)[27] եկող չոր ու ցամաք հաղորդումը Արտաշես I-ի կողմից Կասպիանա-Կասպքի նվաճման մասին լրացրել է բանահյուսական Արտաշեսի՝ տվյալ դեպքում Տրդատ I-ի, նույն շրջանը վերանվաճելու մասին իր բանավոր աղբյուրի տեղեկություններով: Ստացվել է Արտաշես I-ի և Տրդատ I-ի կատարած համանման գործողությունների միատեղում և դրանց վերագրումը՝ Խորենացու մոտ այս երկու գահակալների գծերը պահպանած Արտաշես II-ին:

Ինչպես տեսանք, Կասպքի հնազանդեցումը Խորենացին վերագրում է Արտաշեսի թագադիր և զորավար Սմբատ Բագրատունուն: Սրան պետք է նույնացնել նույնպես Խորենացուց հայտնի մարաբասյան Վաղարշակի (հայ Արշակունիների արքայատոհմի ավանդական հիմնադրի) թագադիր և զորավար Շամբատ Բագարատի հետ[28] (Խորենացուն է պատկանում Շամբատ և Սմբատ անունների նույնության տեսակետը)[29]: Իսկ վերջինս ոչ թե մտացածին, այլ իրականում գոյություն ունեցած անձնավորություն է՝ ժամանակակիցն ու գործակիցը Տրդատ I-ի, կառավարիչը Մեծ Հայքի մի շարք ծայրամասային շրջանների[30]:

Կասպքի թագավոր Զարդմանոսը լինելու էր ապստամբությանը մասնակցած տեղի վրկանցի վերաբնակիչների ցեղապետը՝ ալաններին դեպի Ատրպատական ճանապարհ տված «հյուրկանների թագավորն» ինքը: Սրա անունը իրանական է և բաժանվում է Զարդ ու մանոս բաղադրիչների: Դրանցից առաջինը այն կրող անձնավորության մականունն է՝ նույնական իրանական լեզուների zart «դեղին», «շեկ», «գունատ» բառի հետ (հմմտ. միջին պարսկերեն zart «դեղին», նոր պարսկերեն [illegible] zārd «դեղին», «գունատ», տաջիկե-

---

24 Խորենացի, Բ, ծդ:

25 Այս մասին տե՛ս Ա. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց. Թիֆլիս, 1895, էջ 242—250: Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հատ. Ա, էջ 353 և հատ. Բ, մասն Ա, էջ 12—14: Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 182: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 763: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 432:

26 Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի դրվագներ Հայաստանի մ. թ. ա. III—II դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 17—24:

27 Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 166—172 և 237—241:

28 Խորենացի, Բ, գ:

29 Նույն տեղում, Բ, կդ:

30 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 717, 835:

րեն зард «դեղին», «չեկ», «սպիտակահեր»)։ Հետաքրքիր է, որ տաջիկները այժմ էլ Զարդ անձնանունն են տալիս շիկահեր նորածիններին[31]։ Ինչ վերաբերում է քննարկվող անվան Մանոս բաղադրիչին՝ բուն անձնանվանը, ապա այն կարելի է նույնացնել Ամատունի նախարարների ավանդական նախնու Մանու անվան հետ և դասել Ման արմատը պարունակող իրանական այնպիսի անձնանունների շարքը, ինչպիսիք են. Մանուչեհր (Մանաճիհր), Մանավազ, Մանեճ, Մանիժե, Մանեն և այլն։ Մեր կարծիքով, նույնական են թե՛ Մանոս ու Մանու անձնանունները և թե՛ դրանք կրող անձնավորությունները։

Ամատունի նախարարական տոհմի ծագման և հիմնադիր Մանուի մասին Մովսես Խորենացին գրում է. «Յաւուրս սորա (Արտաշես II-ի—Ս. Պ.) ասեն եկեալ զազգն Ամատունեաց ի կողմանցն արեւելից Արեաց աշխարհին։ Բայց են սոքա բնութեամբ հրեայ, ի Մանուէայ ումեմնէ. որոյ որդի էր մեծահասակ եւ ուժեղ, Սամսոն կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէից՝ ըստ յուսոյ զնախնեացն կոչել զանուանս. Բայց է ճշմարիտ, որպէս եւ այժմ իսկ է տեսեալ ի զարմս Ամատունեաց, քանզի անձեայք եւ բարեձեւք ըստ պատշաճի վայելեն ամենայն իրաւք եւ ուժեղք։ Տարեալք են նոքա ի յԱրշակայ առաջինն Պարթեւաց Թագաւորեցելոյն եւ յառաջադիմութեամբ անդէն յԱրեաց աշխարհին ի պատիւ հասեալք ի կողմանս Ահմատանի։ Բայց թէ յի՞նչ պատճառաց գալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ. այլ պատուին յԱրտաշիսէ գեղիւք եւ դաստակերտաւք, եւ անուանին Ամատունիք, որպէս թէ Եկք։ Եւ կէսք ի Պարսից՝ Մանուեանս զնոսա կոչեն յանուն նախնւոյն»[32]։

Ամատունիների հրեական ծագման վարկածը, թերևս, Խորենացու ենթադրածը չէ և բխում է հների այն համոզումից, թե պարթևներն առհասարակ, և Արշակունիները մասնավորապես, սերում էին Աբրահամ նահապետի և Քետուրայի՝ արևելք հեռացած որդիներից[33]։ Սակայն Ամատունիների նախնուն Խորենացին ինքն է հրեա դարձրել՝ ինչ-որ չափով տուրք տալով այս տեսակետին, ինչպես նաև ելնելով նրա Մանու անվան և առասպելական Սամսոնի հոր Մանուէ, Մանովէ (<հուն. Μανωε < եբր. Manōḥa)[34] անվան պատահական նմանության հանգամանքից։ Իրավամբ, մերժելով թե՛ Ամատունիներին հրեական ծագում վերագրելու և թե՛ նրանց տոհմանունը պարսկերեն amad-an (آمدن «գալ») բառից բխեցնելու փորձերը, Ն. Ադոնցը Ամատ-ունի տոհմանունն առաջարկում է կապել mad, amad կամ mat-, mand էթնոնիմների հետ և ըստ այդմ Ամատունիներին վերագրել մարական կամ մատիենա-մանդեական ծագում[35]։ Բայց, քանի որ Ամատունի-Մանույանները քաջատեղյակ էին իրենց նախնիների սկզբնապես արևելյան Իրանում («ի կողմանցն արեւելից Արեաց աշխարհին») բնակվելու հանգամանքին, ապա մնում է ենթադրել, որ «պարթևա-վրկանական» ծագում ունեցող Մանույանները Կասպքից հետո տիրույթներ ստանալով Արտազում, հետագայում սեփականել էին նաև նրա հին տերերի Ամատունի տոհմանունը (ճիշտ նույն կերպ Արշակունի-

[31] А. Г. Гафуров, Способы и виды наречения детей у таджиков, «Индийская и иранская филология», М., 1964, էջ 287—288։

[32] Խորենացի, Բ, ծէ։

[33] Նույն տեղում, Բ, ա և կր։

[34] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 204։

[35] Н. Адонц, նշվ. աշխ., էջ 418, 419, ծան. 1, 2, 3։

ներին ազգակից Կամսարականների՝ Արշարունիքում հաստատված ճյուղը սեփականել էր նրա հին տերերի Աշարունի, Արշարունի տոհմանունը)։

Հայտնի է, որ Արտազ գավառը կոչվել է նաև Շաւարշական կամ Շաւարշան։ Նրա այս անվանումները նորից առնչվում են արևելյան Իրանի հետ՝ ցույց տալով այնտեղից եկած էթնիկական տարրի առկայությունն Արտազում։ Սրանց հիմքում ընկած Շաւարշ անձնանունը իրանական Սիավուշ դիցանվան տարբերակներից մեկն է (հմմտ. ավեստայի Syavaršan, միջին պարս. Siyāvaḫš, նոր պարս. سیاوش, Siyāvus)[36]։ Այս անվամբ հայտնի նախկին մեռնող-հառնող աստվածությունը արևելաիրանական-միջինասիական ծագում ուներ և որպես էպիկական հերոս համարվում էր հիմնագիրը հին Խորեզմի արքայական դինաստիայի[37], որը հեռավոր ազգակցություն ուներ Արշակունիների հետ[38]։

Ինչպես տեսանք, Մովսես Խորենացին գիտեր, որ Ամատունի-Մանուկյանները սերում էին արևելյան Իրանից։ Միևնույն ժամանակ նա չիմանալ չէր կարող, որ այս նախարարական տոհմի ժառանգական տիրույթը Արտազն էր։ Այսուհանդերձ, նա Արտաշես-Տրդատ I-ի օրոք Արտազում հաստատված գաղթականությանը վերագրում է ոչ թե իրանական, այլ ալանա-արգոզյան ծառում։ Նա գրում է. «Զի յետ այնչափ արութեանց՝ (Սմբատը—Ս. Պ.) օգնական եղբարն Սաթինկան յաշխարհն Ալանաց հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշիսի։ Քանզի մեռաւ հայր Սաթինկան, եւ այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց, եւ հալածէր զեղբայրն Սաթինկան. զոր վանեալ՝ հերքէ Սմբատ. եւ տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան, եւ զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի՝ սաստիկ յԱրտաշատ։ Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական դաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի եւ աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչեւ ցայսաւր ժամանակի»[39]։

Հետաքրքիր է, որ Սմբատ Բագրատունու ալանական արշավանքի և տեղական ցնակչության գերեվարման վերաբերյալ Խորենացու այս տողերը անմիջապես նախորդում են նույն Սմբատի կողմից Կասպից երկրի ավերման և նրա Զարդմանոս թագավորին իր ցեղակիցներով գերեվարելու մասին հաղորդմանը։ Իսկ դրանց նախորդում է Սմբատ Բագրատունուն ձոնված հեղինակի ներբողյանը, որը դրանց հետ միասին կազմում է մեկ ամբողջություն, կարծես առանձնացնելով դրանք մնացած ամբողջ շարադրանքից։ Պակաս հետաքրքրական չէ նաև այն, որ Մովսես Կաղանկատվացին, ալաններին ու աղվաններին նույնացնելով, արշավանքն ուղղված է համարում վերջիններիս դեմ[40]։ Դժվար թե միայն ալան (կամ աղան) և աղվան ցեղանունների նմանությունը այսպիսի շփոթ առաջացներ, եթե նա տեղյակ չլիներ Խորենացու Արտաշես II-ի օրոք հայկական զորքերի Արևելյան Անդրկովկաս թափանցելու փաստին։ Հակառակ դեպքում նա ևս, Խորենացու հետևությամբ, կընդուներ

36 Հ. Աճառյան, Անձնանունների բառարան. հատ. Դ. Երևան. 1948. էջ 155։
37 Абурейхан Бируни, Избранные произведения, т. I. Ташкент. 1957. էջ 47։
38 С. П. Толстов, Древний Хорезм. М., 1948. էջ 202—205։
39 Խորենացի. Բ. ծր։
40 Կաղանկատվացի. Ա. գ։

արշավանքի հյուսիսային և ոչ թե արևելյան ուղղությունը։ Սրանք հուշում են, որ Սմբատ Բագրատունու ալանական արշավանքը սերտ կապի մեջ է եղել նրա կասպյան արշավանքի հետ, որ Խորենացու աղբյուրում երկու դեպքում էլ խոսքը եղել է այս շրջանների վերանվաճման և տեղական ապստամբ բնակչության որոշ հատվածները գերեվարելու մասին։ Նշանակում է, Արտաշես-Տրդատ I-ի կորավար Սմբատ Բագրատունու ալանական արշավանքը ուղղված է եղել ոչ թե Հյուսիսային Կովկասի, այլ՝ Կասպք-Փայտակարանի ալանական բնակչության դեմ։

Կասպքում ալանական բնակչության գոյության մասին են վկայում նրանց alan (հայերեն տառադարձությամբ՝ ալան կամ աղան) էթնոնիմը պահած տեղի Աղան-ռոտ գետանունը և Զանդաղան նախարարական տոհմանունը։ Գետը, որը համապատասխանում է Ալանիա-չային[41], Աղան-ռոտ, այսինքն՝ «Ալան-գետ» կամ «ալանական գետ» (ռոտ < իրան. rōt «գետ») է կոչվել իր շրջակայքում բնակված ալանների անունով։ Իսկ Զանդաղան (zand-alān) տոհմանունն ամբողջությամբ ունի «ցեղ ալան» կամ «տոհմ ալան» իմաստը, քանի որ նրա առաջին բաղադրիչը իրանական zand (<zantu «ցեղ, տոհմ») բառն է։

Կասպքի ծովահայաց մասում ալանական էթնիկական տարրը բնակություն կարող էր հաստատել մինչև 72 թ. դեպքերը, հավանաբար 50-ական թթ., քանի որ դրանից մի փոքր առաջ են ալանները հայտնվել Հյուսիսային Կովկասում[42]։ Դերբենդի կողմերից Արևելյան Անդրկովկասի վրայով ներխուժելով Կասպք և որպես Հոռոմի ու Վիրքի դաշնակիցներ հաստատվելով այստեղ, ալանների այս հատվածը տեղի մյուս ցեղերի նման 60-ական թթ. սկզբներին ընդունել էր Արշակունիների գերիշխանությունը։ Բայց կարճ ժամանակ անց՝ 72 թ. ըմբոստացել էր, միանալով իր «հյուսիսական» ցեղակիցներին։ Վերջիններիս հեռանալուց հետո նրանք վերստին նվաճվեցին և մասամբ գերեվարվեցին Հայաստանի խորքերը։ Տեղում մնացած ալանների տոհմա-ցեղային ավագանուց էր սերելու Զանդաղան նախարարական տոհմը, որի ժառանգական տիրույթը լինելու էր Աղան-ռոտ գետի շրջակա գավառը։ Այս առումով պատահական չէ, որ Զորանամակում Զանդաղան տոհմը դասված է «արևելյան դռան» նախարարությունների շարքը։ Պատահական չէ նաև նրա բացակայությունը Գահնամակում, որովհետև սա ընդգրկում էր գերազանցապես մարզպանական ժամանակաշրջանի Հայաստանի նախարարությունները[43] (իսկ Կասպք-Փայտակարանը գտնվում էր մարզպանական Հայաստանի սահմաններից դուրս)։

Հայաստանի խորքերը բշված ալաններին, Խորենացուն հետևելիս, հաստատված պետք է համարենք Արտազում։ Սակայն տեսանք, որ տեղի վերաբնակիչները, որոնց տոհմա-ցեղային ավագանուց էր սերում Ամատունի-Մանուլյան նախարարական տոհմը, ունեին «վրկանական» ծագում։ Ի՞նչը կարող էր լինել այս թյուրիմացության պատճառը. ամենից առաջ Հյուսիսային Կով-

---

41 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 33։

42 В. Б. Виноградов, Сиракский союз племен на Северном Кавказе, «Советская археология», 1956, № 1, էջ 108—121։

43 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 262։

կայի ալանաբնակ Արդոզ երկրի և հայկական Արտազ գավառի անունների հնչյունական որոշ նմանությունը (իսկ որ Արդոզ երկիրը անծանոթ չէր հին հայերին, ցույց են տալիս «Աշխարհացույց»-ի հեղինակի հետևյալ բառերը. «Եւ ալանք են յետ Դիգորին, յԱրդոզ աշխարհին Կաւկասին լեռանցն»)[44]։ Սակայն Արտազ գավառի անունը ավելի հին է, քան պատմական ժամանակաշրջանում այստեղ հաստատված որևէ գաղթականություն։ Այն ներկայացնելու է ուրարտական արձանագրությունների Ultuza երկրանվան հայկական ձևը (քանի որ Արտազ գավառի տարածքը համընկնում է նախկին Ուլտուզայի հետ)[45]։

Ըստ երևույթին, Կասպքից գերեվարված ալանները վերաբնակեցվել էին Արտազից հարավ և Կապուտան լճից հյուսիս-արևմուտք ընկած այն հողերում, որոնք կազմում են Աղանդ-ռուդ (այժմ՝ دو , الند, Äländ-rud)[46] գետի հովիտը։ Այս գետանվան մեջ առկա է նույն ալանների ցեղանվան alant տարբերակը[47]։ Ալանների այս հատվածի տոհմա-ցեղային ավագանուց էր սերելու Առավեղյան նախարարական տոհմը։ Սրա ալանական ծագման և Արտաշես II-ի (Տրդատ I-ի) օրոք Հայաստան գալու մասին տեղեկացնում է Մովսես Խորենացին (ընդ որում, Ամատունի-Մանուչյանների գալուստը հայտնելուց անմիջապես հետո). «Ի սորա աւուրս եւ Առաւեղեանքն, յազգէ Ալանաց, մերձաւորք Սաթինկան, զհետ նորա եկեալք՝ կարգեցան յազգ եւ նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս հարազատք թագուհւոյն մեծի»[48]։

Արշակունիների քաղաքականությունը՝ ուսումնասիրվող շրջաններում վրկանցի վերաբնակիչ ցեղեր կենտրոնացնելու և տեղական ռազմիկ ցեղերին իրենց կողմը գրավելու միջոցով Հայաստանի և Ատրպատականի անվտանգությունը «հյուսիսականներից» ապահովելու գործում, մատնվեց անհաջողության։ 72 թ. իրադարձությունները Տրդատ I-ին ստիպեցին փոխել իր վերաբերմունքը նրանց նկատմամբ՝ ապակենտրոնացնել նրանց, այս ցեղերի որոշ հատվածներին լեռնանցքամերձ շրջաններից հեռացնելու և նրանց տոհմա-ցեղային ավագանու հզորությունը ջլատելու միտումով։

Տրդատ I-ի և նրա գահակալ եղբայրների ձեռնարկած հաջորդ քայլը եղավ այդ շրջաններում բուն Պարթևստանից բերված առավել վստահելի ցեղերի բնակեցումը։ Վերոհիշյալ «վրկանների» նման, սրանք ևս հիմնականում ունեին արևելաիրանական-սկյութական ծագում։ Սրանցից մեկն էր Արշակունիների արքայական ապառն ցեղը, որն այստեղ իր գոյությունը պահպանել էր անգամ V դարում և ապարհացի (կամ ապարհայիկ) անվամբ Եղիշեի կողմից հիշատակվել գեղերի և կատիշների հետ միասին[49]։ Ս. Տ. Երեմյանը, ելնելով, ինչպես այս, այնպես էլ այն փաստից, որ Համդուլլահ Ղազվինին Կուրի գետաբերանից ոչ հեռու հիշատակում է նրանց էթնոնիմը պահպանած Ապար-

44 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 102։

45 Նույն տեղում, էջ 40։

46 Նույն տեղում, էջ 32։

47 Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ. «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 267, ծան. 66։

48 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ծը։

49 Ե ղ ի շ ե, գլ. Զ։

չահր քաղաքը, ապարհացիների բնակության շրջանը որոշում է Կասպքի այն մասում, որը հարում էր հյուսիսային Ատրպատականին (այստեղ էին բնակվում կադիշները՝ անտիկ աղբյուրների կադուսիները) և Գեղումք-Գիլանին (այստեղ էին բնակվում գելերը՝ այժմյան գիլանցիների նախնիները)[50]: Ապառն-ապարհացիների մի ուրիշ հատվածը Արշակունիները բնակեցրել էին կենտրոնական Հայաստանում: Սրանց վերաբերյալ Ս. Տ. Երեմյանը գրում է. «Այս ցեղի մի հատվածը, ինչպես կարելի է ենթադրել, մ. թ. I դարում հաստատվել է Հայաստանում Վանա լճից հյուսիս: Այս ցեղի անունով այստեղ գտնվող գավառը Մանավազակերտ քաղաքով կոչվել է «Ապա[ր]հունիք»: Այս անունով հայտնի էր վաղ միջնադարյան Հայաստանում «Ապահունյաց» նախարարական տոհմը»[51]:

Արշակունիների հայրենի ցեղի Կասպք-Փայտակարանում ունեցած բնակության հետևանքն է Արշակունիների տոհմական պաշտամունքային կենտրոններից մեկի առկայությունն այստեղ: Նկարագրելով Հայոց Խոսրով Մեծ (217—238) արքայի տարած հաղթանակները Սասանյանների դեմ, Ագաթանգեղոսն այնուհետև ավելացնում է. «Ապա հրաման տայր (Խոսրովը—Ս. Պ.) ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յերկրն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոոց դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք եւ սպիտակ նոխազաւք, սպիտակ ձիովք եւ սպիտակ ջորովք, ոսկեղէն եւ արծաթեղէն զարդուք... գիր ազգին Արշակունեաց ի հայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր»[52]: Հիշյալ ուխտատեղին նույնն է Կասպք-Փայտակարանի Նաւբնփորակեան բագինք (նաև Գարառու բագինք) կոչված կրակապաշտական սրբավայրի հետ, որը տեղադրվում է ներկայիս սովետա-իրանական սահմանի մոտ գտնվող Кабирры (Գարառու) կուրգանի մոտակայքում[53]:

Ըստ երևույթին, ապարհացիների սրբավայրերից է եղել նաև Յաշտասար լեռը Կասպքի և Պարսպատունիքի միջև[54]: Անունն արդեն ցույց է տալիս սրա երբեմնի պաշտամունքային օբյեկտ լինելը. Յաշտասար < yast + սար, այսինքն՝ «զոհասար» (հմմտ. պահլ. yast, ավեստ. yastay «զոհ» և հայկական Աշտիշատ սրբավայրի անունը): Այս լեռն Ատրպատականում ըստ երևույթին հայտնի էր արաբ մատենագիրների հիշատակած ابرشتويم (արաբերենում տառադարձվում էր abraštauīm) անվամբ[55]: Անունը պետք է բաժանել ابر (abar, apar-n) اشت (ast, yašt) և ویم (vīm, vēm) բաղադրիչների: Քանի որ vīm, vēm նշանակում է «ժայռ, սար» (հմմտ. ավեստ. vaēma, պահլ. vēm > հայ.

---

50 С. Т. Еремян, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, № 4, էջ 56:

51 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 713, ծան. 21:

52 Ագաթանգեղոս, գլ. Ա, էջ 34 (ընդգծումը մերն է—Ս. Պ.):

53 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 51, 46:

54 Նույն տեղում, էջ 72:

55 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965, էջ 9, 124, ծան. 9:

վեմ), ուստի ابرشتويم լեռան անունն ամբողջությամբ ունի «Ապար (ցեղի, զոհասար» իմաստը։

Արաբական մատենագրության մեջ «Մուղանի երկրում, Բագի կողմերում» (այսինքն՝ այնտեղ, որտեղ տեղադրվում էր ابرشتويم լեռը) հիշատակվող Արշակ, ارشق լեռը[56], հավանաբար նույն Հաշտասար— ابرشتويم լեռն է։ Սրա տեղադրումը Իրանական Ադրբեջանի Արշակ մահալի տարածքում, որն ընդգրկում է Սավալան-Արդեբիլ գծից հյուսիս ընկած հողերը (այստեղ էր գտնվում և Բագը), հավանական է համարում Հ. Թ. Նալբանդյանը[57]։ Ըստ այսմ, Արշակը լինելու էր Ատրպատականի նույնանուն շրջանի հյուսիս-արևմուտքում գտնվող Հաշտասար— ابرشتويم լեռան պաշտոնական անվանումը։ Դա հավանական է այնքանով, որ ապառնը Արշակունիների հայրենի ցեղն էր, հետևաբար իրենք՝ այդ ցեղի անդամները իրենց զոհասարը կարող էին կոչել Արշակ, որը թե՛ իրենց տոտեմ-նախնու անունն էր, և թե՛ դրանից ծագած Արշակունի գահակալների դինաստիական անունը[58]։ Հնարավոր է նաև, որ այս լեռը ձոնված է եղել Արշակունի նախնիների դինաստիական պաշտամունքին, ուստի և կրել է նրանց դինաստիական անունը (հմմտ. Կոմմագենեյի Նեմրութ լեռը որպես Երվանդունի արքայատոհմի դինաստիական պաշտամունքի վայր)։

Արշակունի-ապառնական տարրի Կասպքում և Ատրպատականի հարակից շրջաններում ունեցած բնակության հետևանքն է, հավանաբար, Իրանի էպիկական հերոսներից մեկի՝ Սպանդարի (Սպանդիատ, اسفنديار) այստեղ վայելած լայն ժողովրդականությունը։ Ատրպատականում գտնվող Սավալան լեռան մեջ Սպանդարի փակվելու մասին պատմվել է մի առասպել, որն ընդհանուր գծերով հիշեցրել է Դեմավենդում բանտարկված Բյուրասպի Աժդահակի և Մասիսում քաջքերից արգելված Արտավազդի առասպելները[59]։ Հարևան Կասպքում Սպանդարին նվիրված զրույցների և առասպելների գոյության վերաբերյալ նման վկայություններ չեն պահպանվել, սակայն դրանց երբեմնի գոյության արդյունքներն են Ատրպատականին սահմանակից Կասպք-Փայտակարանի գավառներից մեկի Սպանդարան-Պերոժ և նրա կենտրոն բնակավայրի Սպանդարան անվանումները[60]։ Իրար հարևան այս շրջաններում Սպանդարի վայելած ժողովրդականության երևույթը բնական է, որովհետև Սպանդարը՝ արևելաիրանական-միջինասիական ցիկլի էպիկական այդ հերոսը[61], համարվել է «պարթևական» իշխող մի շարք տոհմերի, այդ թվում և Արշակունիների նախնին[62]։ Երբ սրա հետ միասին նկատի ենք առնում իրանական էպոսի ցիկլերի մեծամասնության արևելաիրանական-միջինասիական ծագու-

56 Նույն տեղում, էջ 34։

57 Նույն տեղում, էջ 131, ծան. 36։

58 Ричард Фрай, Наследие Ирана. М., 1972, էջ 245, 246, ծան. 10։

59 Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, լգ, էջ 220։

60 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 81։

61 И. С. Брагинский, Из истории таджикской народной поэзии, М., 1956, էջ 124, 317։

62 В. В. Бартольд, Сочинения, т. VII, 1971, էջ 391։

մը և պարթևների խաղացած որոշիչ դերը դրանց արևմուտք տարածվելու գործում[63], ապա պարզ է դառնում, որ խնդրո առարկա շրջաններում առկա իրանական էպոսի հնագույն շերտը առնչվում է Արշակունիների դարաշրջանում այստեղ հաստատված «պարթևա-վրկանական» վերաբնակիչների, և առաջին հերթին՝ արևելաիրանական էպիկական այս կամ այն հերոսից սերած համարվող դրանց ավագանու հետ։

72 թ. իրադարձություններից հետո Կասպքում և հարակից շրջաններում ապառնա-պարթևական» վերաբնակիչների հաստատումը մտնում էր Արշակունիների ձեռնարկած բարեփոխումների ընդհանուր սիստեմի մեջ։ Սակայն դրանցից ամենակարևորը ծայրամասային առանձին շրջանների ընդգրկումն էր վարչական խոշորացված նոր միավորների՝ կողմնակալությունների մեջ (ինչպես նաև դրանց կառավարման վստահումը հայ ավագանու ներկայացուցիչներին)։ Մովսես Խորենացին վերջին բարեփոխումները վերագրում է հայ Արշակունիների արքայատոհմի հիմնադիր Վաղարշակին, որն ավանդական անձնավորություն լինելով հանդերձ հիմնականում պահել է Տրդատ I-ի և նրա ավագ եղբոր՝ պարթևական Իրանի գահակալ Վաղարշ I-ի գծերը[64]։ Ըստ նրա, Վաղարշակը հաստատում է «յարևելից կողմանէ, զեզերբ հայկական խաւսիցս, կողմնակալս բիւրաւորս զերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսն եւ որ ի Կադմեայ տանէն»[65]։ Այնուհետև Խորենացին ավելացնում է. «Յետ նորա մեծ եւ անուանի եւ բազմարդիւն զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց գիտեա, զի զցեղս զայս մեծ եւ անուանի մոռացումն եղեւ մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զզունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք զի Աղու ձայնէին զնա։ Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի եւ քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ։ Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտեացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց եւ Գարգարացւոց իշխանութիւնսն»[66]։ Հիշյալ նախարարական տոհմերը գլխավորում էին մինչև Մեծ Հայքի 387 թ. բաժանումը գոյություն ունեցած հետևյալ չորս փոխարքայություն-սատրապությունները. Ուտեացի կոչված նախարարական տոհմը՝ բուն Ուտիքում, Գարդմանացին՝ Գարդմանում, Ծավդեացի-Կադմյանը՝ Արցախում և Սևանա լճի հարավ-արևելքում, իսկ Գարգարացի կոչված նախարարական տոհմը՝ Կասպքում, կենտրոն ունենալով Գարգարացվոց դաշտը Փայտակարան քաղաքով[67]։ Ըստ երևույթին, այսպիսի փոխարքայություն-սատրապություն, կամ Խորենացու տերմինով ասած՝ կողմնակալություն, գոյություն ունեցել է

63 M. Boyce, Some Remarks on the Transmission of the Kayanian Heroic Cycle, „Serta Cantabrigiensia", 1951, էջ 49–51; Zariadres and Zarer, BSOAS, vol. XVII, 1955, էջ 476; The Parthian „gōsān" and Iranian Minstrel Tradition, JRAS, 1957, էջ 10–45։

64 «Հայ ժողովրդի պատմություն», հտ. Ա., էջ 791. ծան. 103։

65 Խորենացի, Բ, ը։

66 Նույն տեղում։

67 Ս. Տ. Երեմյան, «Ծաւդէացոց իշխանութիւնը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 7–8, էջ 46, 48։

նաև Կասպքի հարևան Պարսպատունիքում (հնում այն ներառելու էր նաև հարևան Գաբիթյան գավառը մասամբ կամ ամբողջությամբ)՝ Պարսպատունի կոչված նախարարական տոհմի գլխավորությամբ։ Այս առումով որոշակի իմաստ է ստանում թվարկված շրջաններում պարս բաղադրիչով տեղանունների գոյության փաստը։ Դրանք են. 1. Կոտ-Պարսեան. այսպես էր կոչվում Ուտիքի գավառներից մեկը (ծագում է համանուն դեաանունից), 2. Պարսական. Արցախի գավառներից մեկի անունն էր, 3. Պարս կամ Աշխարհն Պարսից. երբեմն այսպես էր կոչվում Կասպք-Փայտակարանը, 4. Պարսպատունիք. ինչպես գիտենք սա անվանումն էր արևմուտքից Կասպքին հարող գավառի, 5. Պարս (լատին. Paresaca). այսպես էր կոչվում Պարսպատունիքից հարավ-արևմուտք տարածված Գաբիթյան գավառում, Ատրպատականի սահմաններից ոչ հեռու գտնվող մի բնակավայր[68]։

Հիշյալ տեղանունների հիմքում ընկած պարս բաղադրիչը նույնական է հին իրանական pars տերմինի հետ, որը ծագում է pars «կող, կողմ» բառից (հմմտ. ավեստայի parəsu «կող», pərəsu «կողմ», օսերեն fars «կողմ, ծայրամաս», պարսկերեն پهلو pahlu «կող, կողմ, ծայրամաս»)։ Ըստ Ի. Մ. Դյակոնովի, հին Իրանի հարավային ծայրամասի Pārsa (Պարսք, ֆարս), արևմտյան ծայրամասի Parsua<*Parsava և հյուսիս-արևելյան ծայրամասի Parθava (Պարթևք, Խորասան) անվանումները բխում են հին իրանական *pars-, *parsav- բառից՝ անցնելով սեմանտիկ զարգացման հետևյալ փուլերը. կող>կողմ>ծայրամաս, ծայրերկիր (հմմտ. Украина<украйна, окраина<край)[69].

Կասպքի նաև Պարսք, Աշխարհն Պարսից կոչվելը, Պարսպատունիք գավառի անվանումը, ինչպես նաև Գաբիթյան գավառում Պարսք անվամբ բնակավայրի գոյության փաստը հիմք են տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ փոխարքայություն-սատրապությունները՝ որպես առանձին վարչական միավորներ, պարթևական տերմինով կոչվել են պարս (<*pars «ծայրամաս, ծայրերկիր»), իսկ հայերեն համապատասխան տերմինով՝ կողմնակալություն։

Խոսելով հայերենի իրանական փոխառությունների մասին Ռ. Ֆրայը գրում է. «Շատ անգամ դժվար է որոշել՝ գործ ունենք աքեմենյան թե ավելի ուշ ժամանակաշրջանի փոխառությունների հետ, մի բան, որ ամենից առաջ պայմանավորված է պարթևական բառապաշարի մի նշանակալից մասի արխաիկ բնույթով»[70]։ Նույն դժվարության առաջ կկանգնեցներ մեզ պարս տերմինը, եթե մեր ձեռքի տակ չլիներ Խորենացու վերոհիշյալ հաղորդումը Հայ Արշակունիների արքայատոհմի ավանդական հիմնադրի կողմից վերոհիշյալ շրջաններում կողմնակալություններ ստեղծելու և այնտեղ կողմնակալներ նշանակելու մասին։

Ըստ երևույթին, արևելյան փոխարքայություն-սատրապությունների (կողմնակալություն, պարս) կառավարիչ-փոխարքաները կոչվել են ոչ միայն կողմնակալ, այլ նաև պարթևական համապատասխան տերմինով՝ պարսպատ (<*pars-pati «պարսի պետ», «ծայրամասի պետ»)։ Այդ տերմինը պահպանված է Պարսպատունիք տեղանվան մեջ, որը կարող էր առաջանալ որպես տոհ-

68 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 67, 79, 88։
69 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 69։
70 Ричард Фрай, նշվ. աշխ., էջ 174։

*մանուն (Պարսպատ-ունի) ընկալված* պարապատ *տիտղոսից (հմմտ.* Ասպետուն*ի և* ասպետ, Մաղխազունի *և* մաղխազ, Մարդպետական *և* մարդպետ*): Հավանաբար,* պարս-*երի պաշտպանության համար առանձնացված և* պարապատ-*կողմնակալների հսկողությանը հանձնված հատուկ կայազորները (կամ դրանք տրամադրող ցեղերն ու տոհմերը) կոչվել են* պարս-ական, պարս-եան: *Այստեղից էլ՝ հյուսիս-արևելյան կողմնակալությունների մեջ մտնող* Պարսականք *(Արցախում) և* Ռոա-Պարսեան *(Ուտիքում) գավառների անվանումները։*

## ПАЙТАКАРАН И ПАРСПАТУНИК В ТРЕТЬЕЙ ЧЕТВЕРТИ I ВЕКА Н. Э.

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

Упомянутые в «Армянской географии» («Ашхарацуйце») области Пайтакаран и Парспатуник (у Страбона—Каспиана и Басоропеда), в начале II в. до н. э. были отняты у атропатенских мидийцев и включены в состав древнеармянского государства. Сведения, имеющиеся у Корнелия Тацита, Иосифа Флавия и Мовсеса Хоренаци, прямо или косвенно касаются этих земель и дают возможность в общих чертах восстановить их историю в третьей четверти I в. н. э.

Набеги «северян» (сарматских и нахо-дагестанских племен Северного Кавказа) на восточное Закавказье заставили братьев-венценосцев Аршакидов (Вологеза I — шаханшаха Ирана, Тиридата I — царя Великой Армении, Пакора — царя Атропатены) предпринять ряд действий для защиты восточных границ Армении и северных границ Атропатены против набегов «северян».

После знаменитого аланского похода в 72 году, когда большинство из пришлых «гирканских» и местных племен Каспианы не противостояли «северянам», а, наоборот, содействовали им, Аршакиды, больше не доверяя им, принудили значительную их часть покинуть эти места и переселиться во внутренние районы Армении. Из их родоплеменной знати вышли такие известные нахарарские роды раннесредневековой Армении, как Аматуни и Аравелян. Позднее Аршакиды в этих окраинных землях положили начало наместничествам (арм. термин — *կողմնակալութիւն*, парф. термин — pars), причем наместниками (*կողմնակալ*, parspati) назначали представителей армянской знати.